№ 32 Փետրվարի 28 (Մարտի 11) 1880 Փետրվարի 28 (Մարտի 11) № 32

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Ֆելիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Փոստաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կառավարչական կարգադրութիւններ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալցխայից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Միջին-Ասիայի գործերը։ Ֆրանսիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Խնդիր։

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՍԵՆԱՏԻՆ ՏՈՒԱԾ ՀՐԱՄԱՆ

—

Հաստատապէս վճռելով սահման դնել յանդուգն չարագործների վերջին ժամանակներում անդադար կրկնվող փորձերին Ռուսաստանի մէջ եղած պետական և հասարակական կարգերը խախտելու համար, Մենք բարի համարեցինք.

1) Հիմնել Ս. Պետերբուրգի մէջ կարգադրող բարձր մասնաժողով պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պահպանելու համար։

2) Կարգադրող բարձր մասնաժողովը կազմել իր գլխաւոր կառավարչից և Նրա օգնութեան համար, իր անմիջական ընտրութեամբ նշանակված մասնաժողովի անդամներից։

3) Կարգադրող բարձր մասնաժողովի գլխաւոր կառավարիչը նշանակել Խարկովի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ, Մեր գեներալ-ադիւտանտ, պետական խորհրդի անդամ, հեծելազօրքի գեներալ կոմս Լորիս-Մելիքովին, թողնելով պետական խորհրդի անդամ և Մեր գեներալ-ադիւտանտի կոչման մէջ։

4) Մասնաժողովի անդամները նշանակել Մեր հրամանով և գլխաւոր կառավարչի առաջարկութեամբ և բացի այդ գլխաւոր կառավարչին իրաւունք տալ հրաւիրել մասնաժողովում բոլոր այն անձինքներին, որոնց ներկայութիւնը նա օգտակար կը դատի։

5) Պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պահպանող բոլոր իշխանութիւնների գործողութիւնները միացնելու համար, կարգադրող բարձր մասնաժողովի գլխաւոր կառավարչին, պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պահպանելու բոլոր գործերի վերաբերութեամբ, տալ հետևալ իրաւունքները.

ա) Ս. Պետերբուրգի և նրա շրջակաների գլխաւոր կառավարչի իրաւունքը, ենթարկելով նրա անմիջական իշխանութեանը Պետերբուրգի քաղաքապետին։

բ) Ս. Պետերբուրգի և նրա զինուորական շրջանի մէջ պատահած պետական չարագործութիւնների քննողական գործերի ուղղակի վարելը և ուղղութիւն տալը և

գ) Նախկին կէտերի մէջ յիշված գործերի բարձր ուղղութիւնը Ռուսաց Կայսրութեան բոլոր այլ տեղերում։

6) Պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պահպանող կարգադրող բարձր մասնաժողովի կառավարչի բոլոր պահանջները պէտք է անմիջապէս կատարվին ինչպէս տեղական իշխանութիւններից, գլխաւոր նահանգապետներից, նահանգապետներից և քաղաքապետներից, նոյնպէս և պետական կառավարութեան բոլոր ճիւղերից, չը բաց առնելով և զինուորականը։

7) Կառավարչական բոլոր ճիւղերը պարտաւոր են կարգադրող բարձր մասնաժողովի կառավարչին լիովին աջակցել։

8) Կարգադրող բարձր մասնաժողովի կառավարչին իրաւունք է տրվում անմիջապէս Մեզանից ընդունել Մեր հրամանները և ցուցումները, երբ այդ հարկաւոր կը համարի։

9) Բացի այդ կարգադրող բարձր մասնաժողովի կառավարչին իրաւունք է տրվում անել ամեն տեսակ կարգադրութիւններ, գործ դնել ամեն տեսակ միջոցներ, որոնց նա անհրաժեշտ կը համարի ինչպէս Ս. Պետերբուրգում, նոյնպէս և Կայսրութեան ուրիշ տեղերում պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պահպանելու համար, և մի և նոյն ժամանակ իր հայեացքից կախված կը լինի այդ կարգադրութիւնների չը կատարելու կամ այդ միջոցները չը գործադրելու համար որոշել պատժի չափը և նոյնպէս այդ պատժի կատարման կարգը։

10) Կարգադրող բարձր մասնաժողովի կառավարչի կարգադրութիւնները և ընդունած միջոցները պէտք է անպայման կատարվին ամենքից և իւրաքանչիւրից և դրանց կարող է կամ ինքը փոխել, կամ առանձին Բարձրագոյն հրամանը, և

11) Մեր այս անուանի հրամանով, պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պահպանող կարգադրող բարձր մասնաժողովը հիմնելուց յետոյ, 1879 թուի ապրիլի 5-ի նոյնպիսի հրամանով հաստատված Ս. Պետերբուրգի ժամանակաւոր գլխաւոր-նահանգապետի պաշտօնը վերցրած համարել։

Կառավարչական Սենատը սրա կատարման համար հարկաւոր կարգադրութիւնը պէտք է անի։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է

«ԱԼԷՔՍԱՆԴՐ»

Ս. Պետերբուրգ, 12 փետրվարի 1880 թուի

—

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Պետութեան հասարակական կազմակերպութիւնը խախտելու և Նորին Կայսերական Մեծութեան Սրբազան Անձնաւորութեանը ձեռնամուխ լինելու համար արած անլսելի չարագործական փորձերի մի շարքը այնպիսի ժամանակ, երբ բոլոր դասակարգերը պատրաստվում են տօնել Կայսրներից ամենամեծահոգու քսանուհինգ ամեայ ներքուստ պըտղաբեր և արտաքուստ փառաւոր թագաւորութիւնը, առաջ բերեց ոչ թէ միայն ռուս ժողովրդի զայրոյթը, այլ և ամբողջ Եւրոպայի զզուանքը։

Մի անգամ չէ՞ որ կառավարութիւնը դիմել է հասարակութեանը, հրաւիրելով ամփոփել իր բոլոր ոյժերը ընդդիմադրելու չարագործական ցոյցերին, որոնք քանդում են քաղաքական կարգի հիմնական սկիզբները, առանց որոց անհրաժեշտելի է ոչ մի բարեկարգ պետութեան զարգացումը։ Այժմ կառավարութիւնը ստիպված է հասարակական հանգստութեան համար փտանգաւոր դրութիւն ընդունող չարիքը ընկնելու համար աւելի ժամանակաւոր միջոցների դիմել։

Թագաւորի Ինքնակալ կամքով ինձ վիճակվեցաւ ծանր պարտականութիւնը՝ առաջնորդել այն կարգադրութիւններին, որոնք անհրաժեշտ են ներկայ դրութեան համար։

Ցոյս Ամենաբարձրեալի վրա դնելով, հաստատ հաւատալով Ռուսաստանի պետական կազմակերպութեան անսասանութեանը, որը աւելի դժուար տարիների է համբերել, Թագաւորին և Հայրենիքին երկար ժամանակ ծառայելու ինձ ամենայն եռանդով։

Ս. Պետերբուրգ, 12 փետրվարի 1880 թուի

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ

—

Դ.

Այդ անցքից մի օր յետոյ, մի ձիաւոր, քրդի ձևով հագնված, ծտի նման սլանալով, մտաւ Տէր-Ղուկասովի բանակը։ Նա յայտնեց, թէ գեներալի անունով շատ կարևոր նամակ ունի բերած։ Նրան տարան դէպի գեներալի վրանը։ Մի օֆիցերի ձեռքով նամակը ներս ուղարկեց նա, իսկ ինքը վրանի դրսումը սպասում էր, հոգ տանելով իր ձիուն, որ շատ քրտնած էր։ Մի քանի րոպէից յետոյ նրան ներս կանչեցին։

Վրանի մէջ նստած էր միջահասակ մի զինուորական, լիքը կազմուածքով և առիւծի խրոխտ դէմքով։ Դա ինքը՝ Տէր-Ղուկասովն էր։ Նա աւլոր գլուխը թեքած ունէր գրասեղանի վրա, ուր ածած էին շատ նամակներ, որ նոր էին բացված։ Նա կրկին վեր առնց նրանցից մէկը, կարդում էր և անդադար ծխում էր։ Նրա անհանգիստ դէմքը արտայայտում էր ներքին խռովութիւն և խորին ցաւակցութիւն։ Նա դարձաւ դէպի նամակաբերը, հարցնելով։

—Դու հա՞յ ես։

—Բացի հայ լինելս, տէրտէրի տղայ եմ, պատասխանեց երիտասարդը։

Գեներալը մի սուր հայացք ձգեց նրա համարձակ դէմքի վրա և շարունակեց իր հարց ու փորձը.

—Բերդումը հաց կա՞ր։

—Մի քանի օրից յետոյ կը սկսեն մէկ մէկու միս ուտել, եթէ չէին ցանկանայ քաղցած մեռնել։

—Ջուր, ինչպէս։

—Ջը կայ։ Պէտք է դրսից բերել տալ. ցերեկով դուրս գալու հնար չը կայ։ Իսկ գիշերը, երբ մթնում է, հերթով տասը-քսան մարդ իջեցնում են պարիսպներից, որ գնան ջուր բերեն. քրդերը այդ լաւ են իմանում, հեռուից հրացանի են քաշում, և գնացողներից շատ անգամ մէկն էլ չէ վերադառնում։

—Հրազէնների պաշարը ինչպէս է,—վառօդ, գնդակ ունե՞ն։

—Սպառվել էր։ Բայց մի հայ—էլի մեր հայերի երեսը թող սիպտակ լինի— գտաւ բերդի մէջ թուրքերից թաղցրած բաւական զէնքեր, վառօդ և գնդակ. հիմա նրանցով եօլայ են գնում։

—Դու ինչպէս կարողացար դուրս գալ բերդից։

—Առաւօտեան, դեռ արևը չը ծագած, պարսպից ցած իջայ և ուղիղ մտայ քրդերի բանակի մէջ։ Մի ամբողջ օր նրանց ծիծաղցրի, ուրախացրի, երգեցի, պար եկայ և հաղար տեսակ օյիններ հանեցի, և այսպէս, ամեն տեղ մտայ, ամեն բան իմացայ, յետոյ, մեռք բարով ասելով, հեռացայ։

Գեներալը զարմացած նայեց երիտասարդի երեսին, հարցնելով.

—Դու խենթ ես, ինչ է, այդ ընչեր ես խօսում։

Այո՛, տէր, պատասխանեց երիտասարդը հանգիստ կերպով.—ինձ վիճակված է իմ ամբողջ կեանքում խենթի դեր կատարել... վատ չէ, դա ազատում է շատ փորձանքներից.... Ես հէնց ինձ խենթի տեղ էի դրել, և այնպէս մտայ քրդերի բանակը։

Եւ նա սկսեց նկարագրել իր հագուստը և այն բոլոր ծաղրական ձևերը, որով յայտնվեցաւ քրդերի բանակի մէջ։

Գեներալի սառն դէմքի վրա անցաւ մի թեթև ժպիտ, և նա ընկերաբար հարցրեց.

—Իսկ այդ հագուստը դու ո՞րտեղից գտար։

Ատուած հասցրուց։ Ճանապարհին մի քուրդ գտայ, այդ հագուստը, այդ զէնքերը և այն սիրուն ձին, որ դրսումը կանգնած է, նրանից խլեցի, պատասխանեց երիտասարդը, իր սովորական եղանակով պատմելով, թէ ինչ հնարքով կարողացաւ ըսպանել քրդին։

—Դու քաջ տղայ ես երևում, ասաց գեներալը, և կրկին ընդունելով իր առաջվայ մտախոհ կերպարանքը, շարունակեց հարց ու փորձը.

—Շատ են քրդերը։

—Ասում են, քսան հազարից աւել են, բայց բոլորը քրդեր չեն, նրանց մէջ խառն են ամեն տեսակ մահմետական ցեղեր,—ով որ մի քանի կտոր զէնք է ունեցել և մի ձի, վազ է տուել դէպի Բայազէդ, և այսպէս կազմվել է մի ահագին բազմութիւն։ Ես ճանապարհին տեսնում էի, թէ ինչպէս դիմում են այնտեղ միշտ նոր և նոր խումբեր։

—Թնդանօթներ ունե՞ն։

—Ունեն։

—Ի՞նչ դիտաւորութիւն ունեն։

—Շտապում են Բայազէդի բերդը առնել, յետոյ անցնել Երևան և մի շաբաթից յետոյ Թիֆլիսում լինել, որովհետև սիրուն վրացուհիները և հայոց աղջիկ պարոնները սաստիկ հետաքրքրում են նրանց։

Գեներալի դէմքի վրա դարձեալ երևաց ժպիտի նման մի բան, և նա արհամարհական կերպով հարցրեց.

—Քան հազարով պիտի Թիֆլիս գնան.—Այդ լինել չէ կարող....

—Քան հազարը քիչ չէ, տէր, երբ առջևում հազար հատ սալդաթ չը կայ. բացի դրանից, շուտով կը միանան նրանց հետ Սամիլի փաշայի բոլոր զօրքերը։ Իսկ մեր կողմերի մահմետականները զրկերը բացած, անհամբերութեամբ սպասում են իրանց կրօնակից հիւրերին....

Կրկին մառայ տխրութիւնը սև ամպի նման անցաւ գեներալի դէմքի վրա, և նրա սիրտը, որ բախտի ձախողակի փոփոխութիւնից երբէք խրոովել չը գիտէր, այժմ սկսեց ալեկոծվիլ։ Նա ձեռքը տարաւ դէպի ճակատը, սկսեց անգիտակցաբար չփել նրան, կարծես, աշխատում էր վանել նրա վրա դիզված թախծութիւնը։ Եւ բոպէական մտածութիւնից յետոյ, ալեոր գլուխը վեր բարձրացրեց, հարցրուց.

—Բայազէդի քաղաքը մտա՞ր։

—Մտայ։ Հայ-քրիստոնեայի մի չունչ անգամ չէ մնացել. ծերերին, պառաւներին և երեխաներին կոտորեցին. լաւ-լաւ ջահել կնիկներին, աղջիկներին և պատանիներին գերի տարան. տները այրեցին, և ինչ որ ունէին կողոպտեցին։ Մի հարիւրի չափ ընտանիք միայն, որոնք առաջուց գիտէին, թէ ինչ վտանգ է սպառնում Բայազէդին, դեռ քրդերը չեկած, փախան, գնացին սահմանակից պարսից Մագու քաղաքը։ Բայց դրանք էլ միայն իրանց գլուխը կարողացան ազատել, կայքերը թողեցին թշնամու ձեռքը։ Ա՛խ, այդ մահմետականները որքան անգութ, որքան անազնիւ կերպով վարվեցան հայերի հետ....

—Ո՞րպէս։

—Երբ պատերազմի սկզբներում ռուսները մոտեցան Բայազէդին, տեղային մահմետականները սաստիկ երկիւղի մէջ էին, կարծում էին, թէ ռուսները կը գան, և Թուրքերի նման նրանց կը կողոպտեն, և կայքերը կը յափշտակեն։ Այս մտքով իրանց ունեցածը թաղցրին հարևան հայերի տներում, ասելով, թէ ազուք քրիստոնեաներ էք, ռուսները ձեզ չեն դիպչի, և մեր կայքը ձեր տներում ապահով կը մնայ։ Ռուսները եկան, և

ռայութեանս ժամանակամիջոցում համոզվելով ռուս ժողովրդի առողջ դատողութեան և բարոյական ամրութեան մէջ, ես ջերմեռանդութեամբ ընդունում եմ դէպի իմ թոյլ ոյժերը ցոյց տուած Կայսերական հաւատարմութեան այդ նոր նշանը:

Թոստովանվում եմ առաջիկայ իմ գործունէութեան բոլոր դժուարութիւնը և իմ պատասխանատուութիւնը: Նստապող յոյսերին տեղիք չը տալու համար, կարող եմ միայն խոստանալ մի բան՝ գործադրել բոլոր ջանքերս և կարողութիւնս, որպէս զի չը կանգնեմ ոչ մի խիստ միջոցի առջև յանցաւոր գործողութիւնները պատժելու համար, որոնք խայտառակում են մեր հասարակութիւնը, միւս կողմից հանգստացնել և պաշտպանել հասարակութեան բարեմիտ մասի օգուտները:

Այդ յոյսով ես ամենից առաջ դիմում եմ անօրինակ չարագործութիւնների վկայ մայրաքաղաքի բնակիչներին, խնդրելով հանգստութեամբ և արժանաւորութեամբ վերաբերվել ապագային և չը շփոթվել չարամիտ կամ թեթևամիտ ներշնչումներից, խօսակցութիւններից և լուրերից:

Դէպի ներկայ ծանր դրութիւնը ազգաբնակութեան խելացի և հաստատ վերաբերումն ամենի համար թանգագին նրպատակին հասնելու համար, աջողութեան ամուր գրաւական եմ համարում: Այդ նպատակն է՝ վերականգնել տատանված կարգը և վերադարձնել Հայրենիքը ապագայ խաղաղ առաջադիմութեան ճանապարհի վրա, որ ցոյց է տուած նրա Օգոստափառ Առաջնորդի բարի Նախագիծներով:

Գենեռալ-Ադիւտանտ կոմս Լորիս-Մելիքով
Ս. Պետերբուրգ, 14 փետրվարի 1880 թուին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

6 փետրվարի

Կիրակի օրը հայր Եղիան քարոզի ելաւ. նա չատ չը խօսեց. նա լաւ էր ճանաչում իր ժողովուրդը, որին հարկաւոր էր միայն յայտնել, յորդոր կարդալը աւելորդ էր. ինչ սքանչելի ժողովուրդ, ինչ գովելի սովորութիւն. դէպքը պահանջած ժամանակը հերիք է քահանայի մի նշանը. մնացածը ժողովուրդը ինքն գիտէ, նա իսկոյն ըմբռնում է այն, ինչ վերաբերվում է իր պարտաւորութեան. կիրակէ օրից սկսած ամենի բերանից էլ ուրիշ բան չէ լսվում եվ ան և սով, սով և վանս. այս է միայն լսվում. Կիրակէ օրից ժողովուրդը շարժման մէջ է. նուիրատուութիւններ են հաւաքվում. ժամագործի խանութ, սրճարան, եկեղեցու սրա՝ ամեն տեղ վանեցոց հոգն է տիրապետում. երէկ սկսված ձեռաց հանգանակութիւնը նոյն օրը երկու հարիւրից անցաւ. Հանգանակութիւն անելու պարտաւորութիւնը խիստ վսեմ է եղել այս օրհնված հայ հասարակութեան մէջ, վասն որոյ հանգանակութիւն անելու պատիւը քահանան ուզեց տալ այս անգամ երեք ազնիւ երիտասարդներին: Այսօր մի խիստ ցուրտ և դառնաշունչ օր է, բայց պ. պ. Կ. Մուտաֆեան, Զաթալբաշեան և Ցարոյեան ստորագրութեան թուղթը ձեռին արիաբար շրջում են իրանց յանձնած գործով ոգևորված. Ամեն տուն նոցա պատուում է, ամեն տուն նոցա օրհնանքով է հանդիպում. կարծես Հայկ Նահապետը երեք օր առաջ է բաժանվել այս հասարակութիւնից հայրական օրհնութիւնը նոցա մէջ թողելով. Մարդ սոսկում է, երբ մտաբերում է որ մի անիծեալ մեծ քաղաք այսպիսի մտքով է Ախալցխայից և այդպիսի հեռու հայութենից....

Ախալցխան հայի քաղաք է, հայը կարող է նորանով պարծենալ. Ահա ապացոյց. հազար տուն ժողովուրդը հինգ բարեկարգված ուսումնարաններ է պահում, տարեկան նուիրելով տասն ու չորս հազար ռուբլի: Նոյն հասարակութիւնը արդէն երեսուն տարի պահում է իր հաշուով իր մէջ գտնված չքաւոր ընտանիք, որոնց թիւը հարիւր տասնից երբէք չէ պակասել: Նոյն փոքրիկ հասարակութիւնը ուղարկելով 500 ր. «Սիլիկեան» ընկերութեան, յանձնառու է եղել իրաքանչիւր տարի ուղարկել այդչափ: Նոյն փոքրիկ հայկական ժողովուրդը պահում է իր հաշուով հինգ ուսանող բարձրագոյն ճեմարաններում. Նոյն ժողովուրդը ուղարկում է տարեկան երկու հազար ռուբլի Էջմիածնի ճեմարանին իր եկեղեցական եկամուտներից: Նոյն հասարակութիւնը ունէ արդէն պատրաստի գումար մի օրիորդական ուսումնարան բանալու համար, որտեղ պիտի տիրապետէ արհեստը և գործնական ուղղութիւնը: Նոյն հասարակութիւնը որոշեց նորերս իր քաղաքագլխի առաջարկութեամբ ուղարկել արտասահման երեք ընդունակ երիտասարդներ կատարելագործվելու այն արհեստների մէջ, որոնք տարածված են իրանց քաղաքում: Նոյն հասարակութիւնը ունի լաւ եկեղեցիներ, լաւ ընթերցարան, լաւ ժողովարան:

Ահա այսչափ հոգևորով ծանրաբեռնված մի փոքրիկ և համեմատաբար ոչ հարուստ հայկական կօլօնիա այժմ առաջինն է ձեռք մեկնում դէպի իր գրպանը վանեցիներին օգնելու համար. Ինչ պիտի ասեն ուրեմն Թիֆլիս, Շուշի և Կովկասի միւս հայաբնակ քաղաքներ, որոնց թիւը տասն և հինգից աւելի է և իրաքանչիւրը ոչ պակաս բազմամարդ է, քան թէ Ախալցխան. Նոքա պիտի լըռէն. ինչ իրաւունքով. Նոքա պիտի արթնանան. Երբ.... Ախալցխան հայ քաղաք է, որովհետև կէս դար առաջ Լրղրումից բերած հայութիւնը մնացել է նորա մէջ անքակ, անապակ. դորա պատիւը պատկանում է դարձեալ հայուհուն: Երիտասարդ հայը գնացել է Գերմանիա ուսում առնելու, նորա պաշտած մայրը իր նամակները պակաս չէ արել նորանից, որին օրհնելով աղաչել է հայութիւնը չը մոռանալ: Երիտասարդ հայը գնացել է Վիէննա վաճառականութիւն անելու, փոխել է հագուստը, փոխել է ձևերը, բայց տուն յետ դալով, երբ նա գրկել է իր շնորհալի քրոջ՝ քոյրը ասել է. «ես, քո նոր չորն է աւելի գեղեցիկ, թէ իմ գործած նոր փիւսկիւլը. դու ինձ համար Եւրոպական կերպասից կրծկալ և թիւլիք ես բերել, ես քեզ համար զանկապան, վզնոց, գուլպայ և քսակ եմ գործելը: Երբ երիտասարդ հայը հեռու երկրից գալով օտարուհուն է գովել, նորա քոյրը և մատաղահաս ամուսինը աղաչել են նորան էլ չը խօսել օտարուհու վրա, երբ հայուհին ամենքից վեր է, ամենքից գեղանի: Այսպիսով հայուհին միշտ եղել է հայութեան պահապան, վասն որոյ յիրաւի նա սքանչելի է. նա բանաւոր է և խոհարար իր տան յարկի տակ, բայց նազելի է և չնորհաչատ մի խնջոյքի մէջ. նա դանդաղ է, նա ընկճված մարդի հետ խօսելիս, բայց յանդուգն է և կատաղի իր պատիւը չօչափելիս. նա սառն է և անտարբեր ուրիշ հարցերում, բայց վառ է և արթուն կըրօնի և ազգութեան գործի մէջ. նա ներողամիտ է և աղօթող իր որդու սխալմունքի համար, բայց անհաչտ է և անիծող, երբ այդ որդին եկեղեցի է մտնում օտարուհու հետ կապվելու համար. նա ժլատ է և խնայող, նա պաճուճանքով չէ զարդարում իր թոթով ձագին, բայց նա հազար քնքոյշ զգացմունքներով է լցնում նորա մատաղ սիրտը: Ով է աւելի բարձր՝ Թիֆլիսցի թչուառ հայ կինը, թէ ախալցխացի կռՕՆ.... Թիֆլիսցին հայուհի չէ, նա գնչու է, թէպէտ եւրոպական չարժվածքով, վասն որոյ և նրա զաւակն ծիծաղում է, երբ վաղսուրբական գաւառում ճանճի պէս մեռնում են մի տեսակ մարդիկ, որոնց արհամարանքով օտարների առաջ նա հայ է կոչում.....

Թէպէտ չատերը հաստատում են որ հայկական ազգութիւնը դարերի մէջ ջրից և կրակից հանողը եղել են Ղևոնդներ և Ներսէսներ, բայց ով դիտել է հայուհու յատկութիւնները և նորա ներշնչող հոգին իր զաւակների մէջ, նա չէ կարող սխալվել եթէ վիճաբանէ այդ կարծիքը՝ Ներսէսների պատիւը վերաբերելով միայն հայուհուն, միայն հայուհուն պարտական մնալով հայի այժմեան լեզուով և բոլոր անհատական յատկութիւններով, որ մեծ դեր են խաղացել պատմական ճգնաժամերի և կրօնական պատերազմների ժամանակ. Հային առաջ է մղել ոչ Ղևոնդի յորդորը, այլ նորա մօր և քրոջ արտասուքը, որի հետ կապված են եղել հայի կրօնական և որդիական զգացմունքները ու եղբայրական գորովանքը....

Նոյն հայուհի, թուով մօտ հինգ հարիւր, ժողովվել էին ամսոյ 3-ին կիրակէ օրը Ախալցխայի մայր եկեղեցում հայր Եղիայի աղօթքը և նորա քարոզը վանեցոց համար լսելու. Քարոզից յետ իւրաքանչիւր հայուհին պիտի լինի գաղտնի դրդիչ ազգային գործի մէջ. այդպէս է նորա պատմական կոչումը.....

Գր. Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 21 փետրվարի

Անցեալ յունվար ամսին հայր Ստեփանէն յանձնել էր ինձ հասցնելու համար իմ ընկեր Տէր-Պետրոսեանին մի ստորագրութիւն յօգուտ ս. Էջմիածնի ճեմարանի, որ ես հեռագրատան հայ պաշտօնեաներից ամսի 20-ին մի գումար հաւաքեմ. ցաւակցաբար այդ գործին ստորագրողներ չեղան, բացի ինձանից և իմ ընկեր Տէր-Պետրոսեանից, որ նուիրեցինք երկուսս միասին 2 ռուբլի. Բայց սուրբ հօրը չը պատահելով, որ անձամբ յանձնէի իր ստորագրութիւնը և 2 ռուբլ. և իմանալով, որ հայր Ստեփանէն գնացել է ս. Էջմիածին, մինչև այսօր այդ գումարը մնաց ինձ մօտ.

Այժմ համաձայնութիւն ստանալով իմ ընկերոջ կողմից նուիրել մեր ստորագրած 2 ռուբլ յօգուտ Վանի հայ սովալլուկներին, ես իմ աղքատիկ քսակից աւելացրի նոյնպէս 2 ռուբլ այդ ազնիւ և աւելի համակրելի գործին, ուրեմն ընդամենը 4 ռուբլ, որ ներփակելով Նամակիս մէջ նոյնպէս և հայր սուրբի ստորագրութիւնը, պատիւ ունեմ ուղղելու ձեզ, խնդրելով բարեհաճէք մի անկիւն չնորհել այս նամակիս ձեր պատուական թերթի մէջ ի գիտութիւն հայր Ստեփանէի. Իսկ այս 4 ռուբլը յանձն առնէք հասցնել ուր հարկն է.

Պօղոս Սայանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոզդոկ, 15 փետրվարի

Ցանուն վանի հայ սովալների ամսոյ 3-ից բանալով ստորագրութիւն քաղաքիս հասարակութեան մէջ, որոնք առատ նուիրաբերութեամբ մասնակցելով գործին, ժողովեցաւ մի հարիւր ինսուն երկու ռուբլ, որը ուղարկելով պատուելի խմբագրու-

---

հարկէ, ոչինչ չարեցին, թէ մահմետականի և թէ քրիստոնեայի հետ վարվեցան առանց խտրութեան. և մահմետականները այդ տեսնելով, հանգստացան, և իրանց պահ տուած իրեղէնները ամբողջութեամբ յետ ստացան հայերից.—Հիմայ էլ, երբ ձայն դուրս եկաւ, թէ քրդերը գալիս են, Թուրքերը ասեցին իրանց հարևան հայերին. գուրս մեզ լաւութիւն էք արել, մենք էլ պէտք է փոխարէնը ձեզ անենք, քրդերը գալիս են, ձեզ կը կողոպտեն, տուեցէք ձեր իրեղէնները, մենք կը պահենք. Հայերը հաւատացին, և ինչ որ ունէին, նրանց պահ տուեցին, և ոմանք իրանց կնիկներով ու աղջիկներով թաքնվեցան հարևան Թուրքերի տներում. Իսկ երբ քրդերը մտան քաղաքը, Թուրքերը ասեցին հայերին. գուրս եկէք մեր տներից, եթէ քրդերը կը հասկանան, որ մեր տներում հայեր կան պահված, մեզ էլ ձեզ հետ կը կոտորենն. և այսպէս, խեղճ հայերին տուեցին Թշնամու ձեռքը, և նրանց հարստութեանը իրանք տիրացան. Բայց երբ սկսվեցաւ կոտորածը, տեղային Թուրքերը առաջինը եղան, որ բացարեցին իրանց տներից կրակը... այն Թուրքերը, որ մի և կէս ամիս առաջ ձեզ մօտ երդվեցան, գեներալ, հաւատարիմ մնալ ռուսաց իշխանութեանը... հրացաններ արձակում էին ամեն կողմից, արձակում էին մինչև անգամ Թուրքերի կնիկները...

Գեներալը լուռ լսում էր. Երիտասարդը շարունակեց.

—Ա՛խ, եթէ գիտենայիք, տէր, թէ որքան լաւ տղամարդիկ փչացան այն կռիւի մէջ, որ մենք ունեցանք քրդերի հետ նախ քան Բայազէդը նրանց ձեռքը տալը. Որպէս ձեզ յայտնի է, տէր, բերդի պահպանութեան համար թողած էին խիստ փոքր թիւով ռուս զինուորներ, հայ և Թուրք միլիցիայի հետ. Շտօկվիչը, Բայազէդի այդ հերոսը, ռուս զինուորներով պահպանում էր բերդը, իսկ միլիցիան պահպանում էր քաղաքը. Մեզ վաղուց լուրեր էին հասնում, թէ անագին բազմութիւն քուրդերի, Շէյխ—Ջալալէդդինի և Շէյխ-Իբրահիմի գլխաւորութեամբ, դիմում են դէպի Բայազէդ. Այդ լուրերը հաղորդում էին մեզ վանեցի հայերը. Մենք չտապեցինք, պահանջելով, որ վաղորօք բերդը ամրացնէին, և մեզ մօտ պատրաստվէին բաւականաչափ ուժեր Թշնամու առաջն առնելու համար. Բայց գանվեցան այնպիսիները, որ աշխատում էին հաւատացնել, թէ այդ բոլոր լուրերը սուտ են, թէ ոչինչ պատրաստութիւն պէտք չէ. Թէ ինչ նպատակով այդ դաւաճանները աշխատում էին մեզ անպատրաստ վիճակի մէջ պահել Թշնամուն հանդիպելու ժամանակ,—այդ ես չեմ կարող ասել, դուք, ի հարկէ, վերջը կը տեղեկանաք, գեներալ.—միայն այսքանը կասեմ, որ հայը եղել է միշտ հաւատարիմ և կը լինի.

Որպէս երևում էր, երիտասարդի պատմութեան մէջ կային այնպիսի կէտեր, որ նա դժուարանում էր պարզապէս արտայայտել. Գեներալը ընդմիջեց նրա խօսքը, ասելով.

—Դու այն պատմիր, թէ ինչ արեցիք քրդերի գալուց յետոյ.

—Երբ քրդերը եկան, Շտօկվիչը մի քանի անյաջող կռիւներից յետոյ, չտապեց ամրանալ բերդի մէջ, նրան պահպանելու համար. Միլիցիայի մի մասը մնաց դրսում, որովհետև բերդի մէջ ոչ այնքան տեղ կար և ոչ պաշար բոլորի համար. Մեր ընկեր Թուրք կամաւորներից ոմանք փախան Իգդիրի և ոմանք Պարսկաստանի կողմերը. Իսկ մենք, հայերս, վճռեցինք կամ կոտորվել, կամ քաղաքը չը տալ Թշնամու ձեռքը. Թէև մենք փոքր էինք թիւով, բայց քաղաքի հայ բնակիչներից չատերը պատրաստ էին միանալ մեզ հետ. Այդ խեղճերը գիտէին, թէ ինչ վիճակ է սպասում իրանց, երբ Թուրքերը կրկին կը տիրէին Բայազէդին. Ձեզ յայտնի է, գեներալ, թէ հայերը որպիսի ուրախութեամբ ընդունեցին ռուսաց յաղթական զորքերին, երբ նրանք առաջին անգամ մտան այդ քաղաքը. Հայերի մի այսպիսի համակրութիւնը չէին կարող մոռանալ օսմանցիք, և իրանց վրէժխնդրութիւնը պէտք է թափէին այդ ժողովրդի վրա, որ աւելի բարւոք էր համարում հպատակել ռուսաց արքային, քան օսմանցոց կիսալուսնին....

—Դու դարձալ հեռանում ես հարցից, երիտասարդի խօսքը կտրեց գեներալը,—դու այն ասա, թէ ինչպէս վերջացաւ գործը.

Երիտասարդը զսպելով իր չատախօսութիւնը, որ առաջ էր գալիս, նրա սրտի վրա ծանրացած, տխուր անցքերի տպաւորութիւններից, շարունակեց.

—Դուցէ մեզ կը յաջողվէր, տեղային բոլոր հայերի հետ միանալով, ազատել քաղաքը, եթէ առաջուց կը տային նրանց բաւականաչափ զէնքեր. Բայց զէնքեր չը ստացան նրանք. Այսուամենայնիւ, չատերը միացան մեզ հետ. Կռիւը սկզբում ճշմարիտ ասած, փառաւոր էր. Մի փոքրիկ խումբ պատերազմում էր թով անհամեմատ ուժի դէմ. Մեզ հետ մասնակցում էին կռիւում և մի քանի հարիւր Թուրք կամաւորներ. Բայց յանկարծ տեսանք, որ մեր մահմետական ընկերները թողեցին կռիւի դաշտը և սկսեցին փախչել. Կարծես նրանց չատ ախորժելի չէր գնդակներ արձակել իրանց կրօնակիցների դէմ....Մենք, հայերս, մնացինք մենակ և երկար յամառութեամբ պաշտպանվում էինք. Այդ տեսեց մի քանի ժամ, մինչև մեր հրաձիգների պաշարը սպառվեցաւ. Այն ժամանակ սկսվեցաւ ձեռնամարտ կռիւը. Շատերը ընկան, չատերը գերի բռնվեցան, և մնացածները, տեսնելով, որ ամեն ջանքեր իզուր են, թողեցին և փախան. Այն ժամանակ Թշնամին տիրեց քաղաքին.

—Հասկանալի է....ասաց ինքն իրան գեներալը, մերի և կրօնական պատերազմների ժամանակ. Հային առաջ է մղել ոչ Ղևոնդի յորդորը, այլ նորա մօր և քրոջ արտասուքը, որի հետ կապված են եղել հայի կրօնական և որդիական զգացմունքները ու եղբայրական գորովանքը....

Նոյն հայուհի, թուով մօտ հինգ հարիւր, ժողովվել էին ամսոյ 3-ին կիրակէ օրը Ախալցխայի մայր եկեղեցում հայր Եղիայի աղօթքը և նորա քարոզը վանեցոց համար լսելու. Քարոզից յետ իւրաքանչիւր հայուհին պիտի լինի գաղտնի դրդիչ ազգային գործի մէջ. այդպէս է նորա պատմական կոչումը.....

Գր. Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոզդոկ, 15 փետրվարի

Ցանուն վանի հայ սովալների ամսոյ 3-ից բանալով ստորագրութիւն քաղաքիս հասարակութեան մէջ, որոնք առատ նուիրաբերութեամբ մասնակցելով գործին, ժողովեցաւ մի հարիւր ինսուն երկու ռուբլ, որը ուղարկելով պատուելի խմբագրու-

---

և վերկնելով, մօտեցաւ մի փոքրիկ արկղիկի, և նրա միջից դուրս բերելով մի խաչ, իր ձեռքով կախեց երիտասարդի կուրծքի վրա, ասելով.

—Դու արժանի ես դրան, ես կառաջարկեմ իշխանութեանը, բացի դրանից, քեզ համար ատիճան և ռօճիկ. Դու այսուհետև կը մնաս ինձ մօտ, քեզ նման քաջերը պէտք են ինձ.

Երիտասարդը չնորհակալութեամբ գլուխ տալով, պատասխանեց.

—Այդ խաչը բաւական է ինձ, գեներալ, դուք մեծ չնորհ արած կը լինէք, եթէ հէնց այս րոպէիս թոյլ տայիք ինձ գնալ, ուր որ ես ցանկանում եմ.

Գեներալը զարմանալով երիտասարդի անփառասիրութեան վրա, հարցրեց.

—Ո՞ւր պէտք է գնաս.

—Ազատելու մէկ կի կեանքը, որ ամեն բանից թանգ է ինձ համար....

—Դու, երևի մի գաղտնիք ունես, ընկեր, հարցրեց գեներալը բարեսրտութեամբ.

—Այո, այդ իմ սրտի գաղտնիքն է....

—Ուրեմն, ընդունիր այդ փոքրիկ ընծան, գուցէ պէտք կը լինի քեզ, ասաց գեներալը, տալով նրան թղթի մէջ փաթաթած ոսկիների մի ծրար.

—Ես մեծ պարգև կը համարէի, եթէ չուով կարձակէիք ինձ, պատասխանեց երիտասարդը հրաժարվելով.

—Գնա՛, Տէրը թող քեզ հետ լինի, ասաց գեներալը և սեղմեց երիտասարդի ձեռքը.

Նա գլուխ տուեց և հեռացաւ.

(Կը չարունակվի)